ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/51 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Ք. Սևան

29.10.2019թ.
Ժամը 10:00

Հանձնաժողովի նախագահ՝ Մարի Սիմոնյան

Անդամներ՝ Դոնարա Լալազարյան
Մարիաննա Առաքելյան
Անուշ Մարտիրոսյան
Ռոմելա Հարությունյան

Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/51 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
(Մ. Սիմոնյան)

1. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկված գինը.
3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/51 ծածկագրով ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու մասին.
4. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
(Մ. Սիմոնյան)

1.1 **1-ին չափաբաժնի** համար **Աբգար Խաչատրյան Նիկոլայի Ա/Ձ-ի** կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնման հայտով սահմանված գնին:

1.2 Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 40-րդ կետի 5-րդ ենթակետով, 24.10.2019թ.-ին որոշում էր կայացրել վերը նշված չափաբաժնի համար 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին որոշելու նպատակով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և առաջարկված գների նվազեցման նպատակով մասնակցի հետ միաժամանակյա բանակցություններ վարելու համար հրավիրել էր

նիստ 2019 թվականի հոկտեմբերի 29-ին ժամը 10:00-ին ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում: Բանակցությունների վարման համար սահմանվել էր ժամանակ ՝ 20 րոպե:

1.4 Մասնակցին էլեկտրոնային ձևով ծանուցվել էր գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

1.5 Սահմանված ժամկետում և կարգով **Աբգար Խաչատրյան Նիկոլայի Ա/Ձ-ի** կողմից նոր գնային առաջարկ չի ներկայացվել:

1.6 Հանձնաժողովը ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով որոշեց ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/51 ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սիմոնյան

Անդամներ՝ Դ. Լալազարյան

Մ. Առաքելյան

Ա. Մարտիրոսյան

Ռ. Հարությունյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան